ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2/4.2-2-25

ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի
նախագահի 2025 թվականի հունվարի 9-ի N1-Ա հրամանով ստեղծված
մրցութային հանձնաժողովի նիստի

2025թ. ապրիլի 15-ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2024 թվականի դեկտեմբերի 23-ի «2025 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագիրը, 2025 թվականի ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցը և ծրագրի իրականացման միջոցառումների ծախսերի նախահաշիվը հաստատելու մասին» N3037-Ա հրամանի 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված **2025 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագրի** (այսուհետ՝ Ծրագիր) հավելված 2-ի 4.2 կետով նախատեսված **«Աջակցություն զբոսաշրջային այցելավայրերի կառավարման կազմակերպությունների (DMO-ների) գործունեությանը»** միջոցառման իրականացումն ապահովելու նպատակով ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի 2025 թվականի հունվարի 9-ի N1-Ա հրամանով ստեղծված մրցութային հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Նիստին մասնակցում էին՝

Ա.Մկրտչյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետ, Հանձնաժողովի նախագահ
Ս.Հովհաննիսյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի միջազգային համագործակցության վարչության պետ
Դ.Կարապետյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության պետ
Ա.Բաբայան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի միջազգային համագործակցության վարչության պետի տեղակալ
Լ.Բասմաչյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության խորհրդական
Զ.Հայրապետյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ
Շ.Հովսեփյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետի տեղակալ, Հանձնաժողովի քարտուղար

Քվորումն ապահովված է:

Լսեցին՝

Հանձնաժողովի նիստի օրակարգի մասին:

Որոշեցին՝

Հաստատել Հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

- Մրցույթի արդյունքների ամփոփում:

Լսեցին՝

Հանձնաժողովին ներկայացվեց, որ **2025 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագրի** շրջանակներում հայտարարված կազմակերպությունների ընտրության մրցույթի գործընթացը իրականացվել է armeps.am համակարգի միջոցով:

Նշվեց, որ

1. Armeps.am համակարգի միջոցով Ծրագրի հավելված 2-ի 4.2 կետով նախատեսված **«Աջակցություն զբոսաշրջային այցելավայրերի կառավարման կազմակերպությունների (DMO-ների) գործունեությանը»** միջոցառման իրականացման համար մրցույթին ներկայացվել թվով 2 (երկու) հայտ՝

- «Սյունիքի տարածաշրջանի զբոսաշրջության կառավարման գրասենյակ» ՀԿ-ի,
- «Տավուշի մարզի տուրիզմի զարգացման գործակալություն» ՀԿ-ի կողմից:

2. Armeps.am համակարգի միջոցով հանձնաժողովի անդամների գնահատման արդյունքում Ծրագրի հավելված 2-ի 4.2 կետով նախատեսված **«Աջակցություն զբոսաշրջային այցելավայրերի կառավարման կազմակերպությունների (DMO-ների) գործունեությանը»** միջոցառման իրականացման նպատակով ներկայացված թվով 2 (երկու) կազմակերպության՝

- «Սյունիքի տարածաշրջանի զբոսաշրջության կառավարման գրասենյակ» ՀԿ-ի,
- «Տավուշի մարզի տուրիզմի զարգացման գործակալություն» ՀԿ-ի

կողմից ներկայացված հայտերը չեն համապատասխանում մրցույթի հրավերի պահանջներին:

Մասնավորապես՝

- **«Սյունիքի տարածաշրջանի զբոսաշրջության կառավարման գրասենյակ» ՀԿ-ի** կողմից ներկայացված հայտում կցված չեն Հրավերի 2.4 կետի՝

- 6-րդ ենթակետով սահմանված կազմակերպության փորձը հիմնավորող փաստաթղթերը (օրինակ՝ նախկին փորձը հավաստող պայմանագրեր (ներառյալ հանձման-ընդունման ակտերը):

- **«Տավուշի մարզի տուրիզմի զարգացման գործակալություն» ՀԿ**-ի կողմից ներկայացված հայտում կցված չեն Հրավերի 2.4-րդ կետի՝

- 1-ին ենթակետով սահմանված կազմակերպության կանոնադրությունը (վերջին խմբագրությամբ),

- 6-րդ ենթակետով սահմանված կազմակերպության փորձի նկարագրությունը (առանձնացված տեքստով):

Միաժամանակ «Armeps» համակարգի Պիտանելիություն բաժնում կցված չէ Ծրագրի առաջարկը:

Հանձնաժողովի նախագահը հանձնաժողովի անդամներին տեղեկացրեց, որ վերոգրյալ թերությունները չեն համարվում ՀՀ ԷՆ զբոսաշրջության կոմիտեի նախագահի՝ 2025 թվականի ապրիլի 9-ի «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի զբոսաշրջության կոմիտեի նախագահի 2025 թվականի հունվարի 9-ի N 1-Ա հրամանում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» N 6-Ա հրամանով սահմանված ոչ էական թերություններ:

Կայացավ քննարկում, որի արդյունքում
Հանձնաժողովը միաձայն որոշեց՝

1. **Մերժել** Ծրագրի հավելված 2-ի 4.2 կետով նախատեսված **«Աջակցություն զբոսաշրջային այցելավայրերի կառավարման կազմակերպությունների (DMO-ների) գործունեությանը»** միջոցառման իրականացման նպատակով հայտարարված մրցույթի հրավերի պահանջներին չհամապատասխանող փաստաթղթեր ներկայացրած թվով 2 (երկու) կազմակերպության՝

- «Սյունիքի տարածաշրջանի զբոսաշրջության կառավարման գրասենյակ» ՀԿ-ի,
- «Տավուշի մարզի տուրիզմի զարգացման գործակալություն» ՀԿ-ի

կողմից ներկայացված հայտերը:

2. **Լուծարել** Ծրագրի հավելված 2-ի 4.2 կետով նախատեսված **«Աջակցություն զբոսաշրջային այցելավայրերի կառավարման կազմակերպությունների (DMO-ների) գործունեությանը»** միջոցառման իրականացման նպատակով հայտարարված մրցույթը և հայտարարել նոր մրցույթ:

3. Հանձնաժողովի որոշումը ներկայացնել զբոսաշրջության կոմիտեի նախագահի հաստատմանը:

Ա.Մկրտչյան - _____
(Հանձնաժողովի նախագահ)

Ս.Հովհաննիսյան - _____

Դ.Կարապետյան - _____

Ա.Բաբայան - _____

Լ.Բասմաջյան - _____

Զ.Հայրապետյան - _____

Շ.Հովսեփյան - _____